ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

24 հունվարի 2014թ.

Նախագահ՝ Ա. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ և ֆակուլտետի աշխատակիցներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2013-14թթ. ուստարվա I կիսամյակի քննաշրջանի ամփոփում:

   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/

2. Հետազոտությունների ծավալի աճի, դասախոսական կազմի-ուսանողների ներգրավվածության ընդլայնում:

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկայացրեց 2013-14թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Ըստ կուրսերի քննարկեց նաև ուսուցման ձևի /ընդհանուր, անվճար և վճարովի/ առաջադիմությունը, որը կցվում է արձանագրության տեքստին:

Զեկուցողը հանձնարարեց ամբիոններին ակադեմիական պարտք ունեցող ուսանողների հետ կազմակերպել ամենօրյա լրացուցիչ կոնսուլտացիաներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Ա. Զաքարյանը, Է. Կ. Օսիպովան: Նրանք համակարծիք էին պահանջին և պարտավորվեցին կազմակերպել լրացուցիչ կոնսուլտացիաներ:

Այնուհետև ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Մ. Կ. Մելիքյանը նշեց, որ ֆակուլտետի ՈՒԳԸ անդամները հնարավորինս կօգնեն կազմակերպչական և ուսումնական գործընթացում, որպեսզի լուծարքային շրջանում ապահովվի հնարավորինս բարձր առաջադիմություն:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը ներկայացրեց, ֆակուլտետում հետազոտությունների մասին, ընդգծելով, որ անհրաժեշտ է ակտիվացնել այդ աշխատանքները, ընդլայնելով ուսանողների ներգրավվածությունը: Նա հանձնարարեց մինչև ուսումնական տարվա ավարտը այդ ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացնել ֆակուլտետի խորհրդի նիստի քննարկմանը:

Զեկուցողը միաժամանակ ներկայացրեց 2012-13թթ. ուստարվա I կիսամյակի I լուծարքային շրջանի գրաֆիկը, որը կկազմակերպվի *29.01.-14.02.2014թ.* ժամանակահատվածում:

ՈՐՈՇԵՑԻՆ-

1. Հանձնարարել ամբիոններին ժամանակին կազմակերպել կոնսուլտացիաներ՝ ընդգրկելով նաև մասնագիտությունների կուրսղեկներին:
2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին ավելացնել հետազոտությունների ծավալի աճը՝ ընդլայնելով դասախոսական կազմի-ուսանողների ներգրավվածությունը:
3. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2012-13թթ. ուստարվա I կիսամյակի I լուծարքային շրջանի գրաֆիկը:

ՆԱԽԱԳԱՀ Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ